

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ ԵՒ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՀԱՐԱՁԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Միացեալ Նահանգներ և Գանատա

Հայ ժողովուրդը մեծ պարծանքով յիշում է որ Կոստանդնուպոլսի հայաշատ քաղաքում ԺԹ դարում ծնունդ առած բազմաթիւ հայկական դպրոցները, նոր սերունդներին ջամբել են գիտութեան լոյսը ազգային գիր-գրականութեամբ ու նաև կերտել նրանց բարոյական և ազգային նկարագիրը, բազմադարեան հայ մշակոյթի արժէքների ճառագայթումով նրանց հոգիների մէջ:

Հայ մշակոյթի և դպրութեան ազգային վերածնունդի այս հորիզոնի վրայ, լուսատու փարոսներից մին հանդիսացաւ Կ. Պոլսի Կենտրոնական վարժարանը, որ ահա ուղիղ մէկ դարից ի վեր անընդմէջ իր դուռը բաց է պահել լոյսի ու ոգու ծարաւի բազում սերունդների առջև:

Կ. Պոլսի երջանկայիշատակ պատրիարք՝ Ներսէս արքեպիսկոպոս Վարժապետեանի անմիջական նախաձեռնութեամբ կեանքի կոչուած այս վարժարանը, անցնող հարիւրամեակում, շնորհիւ իր բազմաշնորհ դասախօսների, Հայ Եկեղեցուն ու ազգին պարևել է բազմաթիւ կրթական մշակներ, անուանի գրողներ ու բանաստեղծներ, հայագէտներ, կրթական մշակներ ու հասարակական գործիչներ, որոնք բախտորոշ դեր են կատարել անցնող հարիւր տարիների ընթացքում մեր ժողովրդի հոգևոր-բարոյական և մշակութային զարգացման ճանապարհին:

Այսօր, անհուն է Մեր մխիթարութիւնը, տեսնելով որ նաև մեր օրերին Կենտրոնական վարժարանը շարունակում է իր առաքելությունը պոլսահայ

մեր հաւատաւոր ու բարեպաշտ ժողովրդի ծոցում, նոյն պայծառ հաւատքով, նոյն ոգեշնչանքով, նոյն հոգեշէն իրագործումներով:

Բարձրօրէն գնահատելով դաստիարակչական և մշակութային պատմական իրագործումները՝ հարիւրամեակի սեմին հասած Կենտրոնական վարժարանի և ընդառաջելով Միացեալ Նահանգաց Արևելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի միջնորդութեան, Մեր սոյն կոնդակով յղում ենք Հայրապետական Մեր օրհնութիւնը Միացեալ Նահանգներում կազմուած Յոբելինական Յանձնախմբի անդամներին, մաղթելով, որ Տէրը անսասան ու միշտ լուսառատ պահպանի Կ. Պոլսի Կենտրոնական վարժարանը, մշտանորոգ ներշնչանքներով օծուն շարունակելու համար կրթական իր առաքելութիւնը ի մխիթարութիւն համայն հայութեան:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 6 Մայիսի
1986 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԵ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1419